ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ-1

ք. Երևան

«20» փետրվարի 2026թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանուկյան, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Տիգրան Իշխանյանը, ծնված 08.10.1976թ. նույնականացման քարտի համարը 017627019, տրված 07.02.2025թ. 050-ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշը 1810760208 (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի Բաղադրիչ 3-ի համակարգողի և Ջրային կոմիտեի բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում -ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13,608,000 (տասներեք միլիոն վեց հարյուր ութ հազար) ՀՀ դրամ: Կատարողի մատուցման ենթակա ծառայության դիմաց վճարման ամսական հավասար համամասնությունը կազմում է 1,134,000 (մեկ միլիոն մեկ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է

երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	Տիգրան Իշխանյան
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հասցե՝ Կոտայքի մարզ, գ.Առինջ, Խ.
ՖՆ գործառնական վարչություն	Աբովյան թաղ., 16-րդ փողոց, 4/2տուն
Հ/Հ 900011040467	նույնականացման քարտի համարը
ՀՎՀՀ 02555816	017627019, տրվ. 07.02.2025թ., 050-ի
գլխավոր քարտուղար	կողմից,
scws@scws.am	հանրային ծառայությունների
	համարանիշը 1810760208
	Բանկը՝ Ակբա բանկ
	Հ/Հ 220660480967000
	Հեռ. 041413131
	Էլ. հասցե՝ tishkhanyan@mail.ru
_____ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ	----------Տ. ԻՇԽԱՆՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն
Կ. Տ.	

«20» փետրվարի 2026թ.
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-խ-1

Հավելված N 1
կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը*
85311210/17	խորհրդատվության ծառայություններ	*կարդալ ստորև	դրամ	13,608,000	1	Ծառայությունները մատուցվում են Ջրային կոմիտեում՝ Վարդանանց 13ա կամ Վարդանանց փակուղի 8 հասցեներում	Ծառայությունները մատուցվելու են «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) շրջանակում, ոչ ուշ քան 30.12.2026թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE)»

Չափաբաժին 2

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի ՋՈԾԲ Բաղադրիչ 3-ի համակարգող խորհրդատվական ծառայություններ

Ծառայության նկարագիրը

Ծրագրի իրականացման մարմինը

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտե (ՋԿ)

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Համաշխարհային բանկի (ՀԲ), Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագիրը: Ծրագրի զարգացման նպատակն է (ԾԶՆ) ապահովել բարելավված ոռոգման ծառայությունների և անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման (Գ-ՋևՋ) ծառայությունների հասանելիությունը Հայաստանի ընտրված տարածքներում, մինչդեռ ՋՈԾԲ ծրագրի առաջին փուլի զարգացման նպատակն է ապահովել արդյունավետ ու ֆինանսապես կայուն ոռոգման և անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման ծառայությունների բարելավված հասանելիությունը Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ջրային ռեսուրսների անվտանգ կառավարման մակարդակը՝ հետևյալ հիմնական ուղղություններով. ա) ընտրված ոռոգման համակարգերի արդիականացում, բ) ընտրված գյուղական համայնքներում և մարզերում ջրամատակարարման բարելավում, և գ) ջրային ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ, ֆինանսական և բնապահպանական կայունության ամրապնդում:

ՋՈԾԲ ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Ջրային ոլորտի բարեփոխումներ և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

Ենթաբաղադրիչ 1.1. Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման ամրապնդում

Ենթաբաղադրիչ 1.2. Ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավում

Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում

Ենթաբաղադրիչ 2.1. Ինստիտուցիոնալ ամրապնդում, կարողությունների զարգացում և կարգավորող բարեփոխումներ

Ենթաբաղադրիչ 2.2. Տեխնիկատնտեսական հիմնավորումներ և ենթակառուցվածքների ներդրումներ

Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում

Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացումը կնպաստի երաշտի հանդեպ դիմադրողականության բարձրացմանը՝ ֆինանսավորելով ընտրված ոռոգման համակարգերի վերականգնումը և արդիականացումը մայր, երկրորդ և երրորդ կարգի ջրանցքների մակարդակներում: Նշված համակարգերը ներկայումս համատեղ կառավարվում են Ջրառի կողմից՝ խոշոր մայր ջրանցքների և ջրամբարների մակարդակով, ինչպես նաև Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) կողմից՝ երկրորդ և երրորդ կարգի բաշխիչ ցանցի մակարդակով: Ջրային կոմիտեի (ՋԿ) հետ համագործակցությամբ, Փուլ 1-ի շրջանակում նախնական դիտարկման համար ընդգրկվել է 5 ոռոգման համակարգ: Դիտարկվող ոռոգման համակարգերի ընդհանուր սպասարկվող տարածքը կազմում է մոտ 39,580 հա, որոնք կընտրվեն շրջանակային մոտեցման շրջանակում՝ հիմնվելով հիդրոլոգիական, տեխնիկական, տնտեսական և գյուղատնտեսական պարամետրերի վրա:

Ենթաբաղադրիչ 3.1. Կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում

Այս ենթաբաղադրիչի շրջանակում կիրականացվեն մանրամասն տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ (ՏՏՈՒ) և նախնական նախագծեր, որոնք կընդգրկեն նաև տնտեսական և ֆինանսական վերլուծություն (ՏՖՎ), ինչպես նաև Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ)՝ հինգ նախապես ընտրված ոռոգման համակարգերի վերականգնման կամ արդիականացման համար: Բացի այդ, կմշակվեն 2 պոմպակայանի տեխնիկատնտեսական հիմնավորումները և նախնական նախագծերը: Սխեմաների վերջնական ընտրությունը կիրականացվի՝ հիմնվելով տեխնիկական իրագործելիության, ներդրումային ծախսերի, ֆինանսական և տնտեսական կենսունակության, բյուջետային սահմանաչափերի և Համաշխարհային բանկի OP 7.50 քաղաքականության պահանջների վրա: ՋՕԸ-երը կներգրավվեն գործընթացի վաղ փուլերից՝ նախագծերի վերանայման և հաստատման փուլերում՝ ապահովելու դրանց գործնական կիրառելիությունը և շահառուների մասնակցային մոտեցումը: Վերականգնման կամ արդիականացման ենթակա ենթակառուցվածքները կարող են ներառել՝ գլխամասային հանգույցներ, հիմնական ջրանցքների առանցքային հատվածներ, շրջված սիֆոններ և ջրատար կառույցներ, երկրորդական և երրորդական ցանցեր (խողովակաշարային կամ երեսպատված), ջրի վերահսկման և բաշխման կառույցներ և ելքեր, սելավային և հակաջրհեղեղային պաշտպանության համակարգեր, հոսքի և ծավալի չափման սարքեր, ֆիլտրող կառույցներ՝ աղբի հեռացման կամ լվացման համար, սպասարկման կամուրջներ և ճանապարհներ, պոմպակայաններ, և ջրանցքամերձ կարգավորող ջրամբարներ: Այս ենթաբաղադրիչի նպատակն է ապահովել ջրային ենթակառուցվածքների տեխնիկական, բնապահպանական և կլիմայական կայունությունը՝ խթանելով ոռոգման համակարգերի արդյունավետ շահագործումն ու սպասարկումը: Տեխնոլոգիական արդիականացումները կուղղվեն մեխանիկական համակարգերից դեպի ինքնահոս կամ ճնշումային խողովակային ցանցերի անցմանը՝ այն դեպքերում, երբ դա տեխնիկապես իրագործելի և տնտեսական առումով հիմնավորված է: Ընտրված մեկ սխեմայում կներառվի դաշտային մակարդակում ներտնտեսային ցանցի արդիականացում՝ որպես ցուցադրական նախագիծ փորձնական ՋՕԸ-ի համար: Ենթաբաղադրիչը նախատեսում է նաև «Որոտան–Արփա–Սևան» ջրատար թունելի տեխնիկատնտեսական գնահատում: Որտեղ տեխնիկապես իրագործելի է, ծրագիրը կօգտագործի տեղանքի բարձունքային տարբերությունները՝ մեխանիկական համակարգերից ինքնահոս համակարգերի անցում ապահովելու նպատակով՝ դրանով նվազեցնելով էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները: Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների ընթացքում կուսումնասիրվեն նաև ջրամատակարարման համակարգերի արդիականացման տարբերակները՝ ներառյալ ջրի հսկման և կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, որոնք թույլ են տալիս պահպանել ջրանցքների կայուն մակարդակ՝ անկախ հոսքի տատանումներից:

Կլիմայական հարմարվողականության և աղետների դիմակայունության սկզբունքները կընդգրկվեն բոլոր ներդրումային նախաձեռնություններում՝ առաջնորդվելով Համաշխարհային բանկի «Դիմակայուն ջրային ենթակառուցվածքի նախագծման ուղեցույցներով»: Արդիականացման աշխատանքները կիրականացվեն լանդշաֆտային սկզբունքով՝ մեկնարկելով վերին հատվածներից՝ ջրի արդյունավետ կառավարման ապահովման նպատակով, և շարունակվելով դեպի ստորին տարածքներ: Ներտնտեսական ցանցի ներդրումները կներառեն ժամանակակից ոռոգման, հողի խոնավության պահպանման և էրոզիայի նվազեցման տեխնոլոգիաների կիրառում: Առաջնահերթություն կտրվի այն սխեմաներին, որոնք ցուցաբերում են առավել բարձր եկամտաբերություն և կայունություն՝ հիմնված տեխնիկական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական համալիր գնահատման վրա:

Ենթաբաղադրիչ 3.2. Վերահսկիչ կառավարման և տվյալների հավաքագրման (SCADA) համակարգի ներդրում

Այս ենթաբաղադրիչը կֆինանսավորի երկու փոխկապակցված գործողություն՝ ուղղված ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարմանը և կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանը: Առաջին գործողությունը կենտրոնացած է ջրանցքների և խողովակաշարերի դաշտային տվյալների հավաքագրման,

մշակման և կառավարման վրա՝ համահունչ համապարփակ SCADA համակարգի ներդրման պլանին: Միջոցառումը ներառելու է. ա) հոսքի արագության և ջրի մակարդակի ճշգրիտ, իրական ժամանակի չափումներ՝ կլիմայի փոփոխության ազդեցությունների մոնիթորինգի և կառավարման նպատակով, բ) տվյալների անվտանգ և անխափան փոխանցման ապահովում, գ) տվյալների կառուցվածքային կազմակերպում, պահպանում և արխիվացում՝ երկարաժամկետ վերլուծության նպատակով, դ) իրական ժամանակի և պատմական տվյալների հասանելիության ապահովում իրավասու կառույցների համար, ե) սարքավորումների և ծրագրային ապահովման ստանդարտացում՝ համակարգի համատեղելիությունը և սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու համար, զ) SCADA տեխնիկական թիմի վերապատրաստում՝ համակարգերի տեղադրման, անսարքությունների ախտորոշման, վերանորոգման և պարբերական սպասարկման ուղղությամբ, է) լիարժեք հագեցված SCADA կենտրոնի ստեղծում՝ համալրված պահեստամասերով, փորձարկման սարքավորումներով և ախտորոշիչ գործիքներով: Տվյալների անվտանգությունը և պահուստավորումը կդիտարկվեն որպես համակարգի առաջնահերթ պահանջ՝ ապահովելու համակարգի շարունակականությունը և անխափան աշխատանքը:
Համակարգի նախագծման հաստատումից հետո կիրականացվի SCADA համակարգի երկրորդ փուլի իրականացումը, որը կներառի գլխամասային հանգույցների շլյուզերի հեռակա ձեռքով կառավարում և մոնիթորինգ: Թեև այս բաղադրիչը չի հանդիսանում տվյալ փուլի հիմնական ուղղությունը, այն կծառայի որպես նախնական փորձ՝ հետագայում ոռոգման ենթակառուցվածքներում շլյուզերի հեռակա կամ ավտոմատ կառավարման և բաշխման մոնիթորինգի ընդլայնված համակարգերի ներդրման համար: Այս փորձնական ներդրումները կնպաստեն կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացող տեղումների անկայունության կառավարմանը՝ հնարավորություն տալով ապահովել ճշգրիտ հոսքային հաշվառում և վերահսկում: Բոլոր հոսքաչափման տվյալները կներառվեն միասնական տվյալների կառավարման համակարգում: SCADA համակարգը կաջակցի իրական ժամանակի գործառնություններին և կձևավորի պատմական տվյալների միասնական արխիվ՝ համակարգային պլանավորման, վերլուծության և որոշումների կայացման գործընթացների համար:

Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն առաջադրանքի նպատակն է ապահովել բարձր մակարդակի տեխնիկական ղեկավարում, համակարգում և փորձագիտական աջակցություն՝ ՋՈԾԲ Ծրագրի Բաղադրիչ 3-ի շրջանակներում իրականացվող ոռոգմանն առնչվող բոլոր գործողությունների արդյունավետ, որակյալ և ժամանակին իրականացումն ապահովելու համար՝ համաձայն ՀԲ պահանջների և ՀՀ օրենսդրության՝ Ծրագրի զարգացման նպատակին (ԾԶՆ) հասնելու համար:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՋՈԾԲ Ծրագրի Բաղադրիչ 3-ի համակարգողի պարտականությունները ներառում են հետևյալը.

1. Համակարգել և վերահսկել Բաղադրիչ 3-ի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները՝ ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորման, նախագծման, գնումները, ինչպես նաև ոռոգման համակարգերի վերականգնումն ու արդիականացումը:
2. Համագործակցել բնապահպանական և սոցիալական հարցերի մասնագետների հետ, որպեսզի տեխնիկական նախագծերը և ուսումնասիրությունները համահունչ լինեն ազգային չափորոշիչներին, կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության ինժեներական սկզբունքներին և ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին (ԲՍՍ):
3. Իրականացնել տեխնիկական հարցերի ղեկավարում ոռոգման նորարարական տեխնոլոգիաների և համակարգերի կառավարման գործիքների (օրինակ՝ SCADA, ԱՏՀ -ի վրա հիմնված մոնիտորինգ, ծավալային չափում) ներդրման համակարգման գործում, այդ թվում՝ համակարգել համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը, Տեխնիկական առաջադրանքների մշակումն ու վերանայումը, կապը խորհրդատուների հետ և Ծրագրի իրականացման հսկողությունը՝ համապատասխան մասնագետների հետ սերտ համագործակցությամբ:
4. Համակարգել և տեխնիկական տեսանկյունից հսկել ԾԻԹ-ի համապատասխան անձնակազմի, այդ թվում՝ Բաղադրիչ 3-ի շրջանակներում ներգրավված ոռոգման ինժեներների աշխատանքը, ապահովելով ներդաշնակ համագործակցություն ճարտարագետների, բնապահպանության, սոցիալական հարցերի, գնումների և ֆինանսական մասնագետների միջև:
5. Համակարգել Բաղադրիչ 3-ի գործողություններում ներգրավված ազգային և միջազգային խորհրդատուների աշխատանքը, սահմանել նրանց Տեխնիկական առաջադրանքները, հսկել նրանց գնումների գործընթացը, իսկ պայմանագրի կնքումից հետո՝ համակարգել և հսկել նրանց կողմից առաջադրանքների կատարումը, վերանայել ներկայացվող հաշվետվությունները և տրամադրել տեխնիկական ուղղորդում:
6. Համակարգել ՋՈԾԲ Բաղադրիչների համակարգողների, խորհրդատուների և պետական կառույցների, այդ թվում՝ ՏԿԵՆ-ի, ՋԿ-ի Ջրառի միջև հաղորդակցումն ու պաշտոնական կապը: Սերտորեն համագործակցել Ջրառ-ի հետ նախագծման և շինարարության փուլերի ընթացքում՝ ապահովելով Ջրառ-ի տեխնիկական

առաջարկների ներառումը, վերջնական նախագծերի վերաբերյալ համաձայնության ստացումը, ինչպես նաև վերջինիս լիարժեք ներգրավվածությունը շինարարական աշխատանքների իրականացման և համակարգի շահագործման հանձնման փուլերում:

7. Համակարգել տեխնիկական և առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների, ինչպես նար ԾԻԹ-ի, ՋԿ-ի, ՀԲ-ի և ԶՖԳ-ի կողմից պահանջվող այլ հաշվետվությունների պատրաստումն ու ժամանակին ներկայացումը:
8. Աջակցել տարեկան աշխատանքային պլանների և բյուջեների մշակմանը, ապահովելով ոռոգման ոլորտին առնչվող գործողությունների պատշաճ ներառումը:
9. Իրականացնել ծրագրի կատարողականի ցուցանիշների մոնիտորինգ՝ ոռոգման ոլորտին առնչվող գործողությունների ընթացքին հետևելու և արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու նպատակով:
10. Համակարգել Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ-երի), տեղական ինքնակառավարման մարմինների և շահառու համայնքների հետ համագործակցությունը, ապահովելու մասնակցային պլանավորումը, նախագծերի վավերացումը և աշխատանքների ընդունումը:
11. Տեխնիկական ներդրում ունենալ խորհրդակցությունների, աշխատաժողովների և վերապատրաստման միջոցառումների կազմակերպման և անցկացման գործընթացներում:
12. Աջակցել իրազեկման և կարողությունների զարգացման ծրագրերին, որոնք վերաբերում են ոռոգման ջրի արդյունավետ օգտագործմանը, կլիմայական փոփոխություններին հարմարվելու մեխանիզմներին և շահագործման ու սպասարկման (ՇԵՍ) արդյունավետ պրակտիկաներին:
13. Վերանայել ոռոգման նախագծերը հիմնական փուլերում (Տեխնիկատնտեսական ուսումնասիրության, Նախնական նախագծի և Մանրամասն/աշխատանքային նախագծի) և համակարգել համապատասխան մարմինների ու Ինժեների հետ նախագծերի վերանայման գործընթացը՝ ապահովելով հաստատված նախագծերի հետևողական կիրառումը շինարարության ընթացքում, ներառյալ՝ նախագծային փոփոխությունների և լրամշակումների համակարգումը:
14. Աջակցել գնումների մասնագետ(ներ)ին մրցութային փաստաթղթերի մշակման գործում, ներառյալ՝ Տեխնիկական առաջադրանքների, հետաքրքրվածության հայտերի և մրցութային փաստաթղթերի վերանայումը՝ դրանց ամբողջականությունը և Ծրագրի նպատակներին ու ՀԲ պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև աջակցել հայտերի գնահատման և շինարարական աշխատանքների ու ծառայությունների ձեռքբերման համար կապալառուների և խորհրդատուների ընտրության գործընթացներում:
15. Իրականացնել տեխնիկական հսկողություն պայմանագրերի իրականացման, ներառյալ հաշվետվությունների վերանայման, միջանկյալ և վերջնական հաշվետվությունների հաստատման և տեխնիկական խնդիրների ժամանակին լուծման գործընթացում:
16. Իրականացնել տեղամասային այցեր՝ շինարարության և վերանորոգման աշխատանքների որակի մոնիթորինգի նպատակով:
17. Տրամադրել տեխնիկական աջակցություն և մենթորություն ԾԻԹ-ի անձնակազմին, ՋԿ-ի ինժեներներին և ՋՕԸ-երին՝ ոռոգման արդի տեխնիկական և կառավարման պրակտիկաների վերաբերյալ:
18. Մասնակցել ՀԲ-ի և ԶՖԳ-ի աջակցող առաքելությունների իրականացման գործընթացին և անհրաժեշտ ներդրում ունենալ առաքելության փաստաթղթերի պատրաստման գործընթացում:
19. Բացի վերը նշված պարտավորությունները **ՋՈԾԲ Ծրագրի Բաղադրիչ 3-ի համակարգողը** պարտավոր է Ջրային կոմիտեի նախագահի և/կամ նրա հանձնարարությամբ կամ հրամանով համապատասխան ոլորտ(ներ)ը համակարգող Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ(ների) հանձնարարությամբ անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել Ջրային կոմիտեի կողմից տարեկան բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում ջրային համակարգերի/հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախագծման և կառուցման (վերակառուցման, հիմնանորոգման, վերականգնման, վերազինման, վերանորոգման) փուլերում գտնվող ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր), ինչպես նաև նոր մշակվող ծրագրերի պլանավորման և իրականացման հարցերում:

3. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

1. Բարձրագույն կրթություն քաղաքացիական ճարտարագիտության, հիդրոճարտարագիտության, ոռոգման ճարտարագիտության, հիդրոլոգիայի կամ հարակից ոլորտում:
2. Առնվազն 7 տարվա մասնագիտական փորձ՝ ոռոգման համակարգերի նախագծման, արդիականացման և կառավարման ոլորտում:
3. Առնվազն 5 տարվա հաստատված փորձ լայնածավալ ոռոգման կամ ջրային ենթակառուցվածքների նախագծերի կառավարման կամ համակարգման գործում, նախընտրելի է՝ միջազգային ֆինանսական կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում:
4. Ծանոթություն կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն ոռոգման համակարգերի նախագծման սկզբունքներին, ծավալային ջրաչափման համակարգերին, ինչպես նաև SCADA և GIS հարթակների վրա հիմնված մոնիթորինգի տեխնոլոգիաներին:

5. Համաշխարհային բանկի գնումների, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական պահանջների վերաբերյալ գիտելիքները կդիտվեն որպես առավելություն:
6. Արդյունավետ ղեկավարելու, համակարգելու և հաշվետվություններ կազմելու կարողություններ:
7. Հայերենի գերազանց իմացություն (գրավոր և բանավոր): Անգլերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն:

4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋՈԾԲ Ծրագրի Բաղադրիչ 3-ի համակարգողի ծառայությունները ձեռք են բերվում խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում՝ առաջադրանքի իրականացման համար սահմանված ժամկետի համաձայն: Ծառայությունները մատուցվում են ամբողջական աշխատանքային գրաֆիկով, Երևանում: Անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն գործուղումներ դեպի Ծրագրի տարածք:

ՋՈԾԲ Բաղադրիչ 3-ի համակարգողը հաշվետու է ՋՈԾԲ Ծրագրի ղեկավարին:

Աշխատանքները կիրականացվեն.	
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած: Կնքվելիք պայմանգրի պայմանները կիրառել կողմերի միջև 2026թ. հունվարի 5-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:	մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրանով նախատեսված վարկային միջոցներից Ծրագրի անձնակազմի վճարման գործընթացների մշակումը և մեկնարկը, սակայն ոչ ուշ քան 30.12.2026թ.
Ֆինանսավորման աղբյուր	
ՀՀ պետական բյուջե՝ մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրանով նախատեսված վարկային միջոցներից Ծրագրի անձնակազմի վճարման գործընթացների մշակումը և մեկնարկը	
Հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից աշխատանքների ընդունման ժամկետը	5 աշխատանքային օր
Վճարման ժամանակացույց	
2026թ. մատուցված ծառայությունների համար	
Ամսական հավասար համամասնությամբ	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

_____ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Տիգրան Իշխանյան
Հասցե՝ Կոտայքի մարզ, գ.Առինջ, Խ. Աբովյան թաղ., 16-րդ փողոց, 4/2տուն
նույնականացման քարտի համարը 017627019, տրվ. 07.02.2025թ., 050-ի կողմից,
հանրային ծառայությունների համարանիշը 1810760208
Բանկը՝ Ակբա բանկ
Հ/Հ 220660480967000
Հեռ. 041413131
Էլ. հասցե՝ tishkhanyan@mail.ru

----------Տ. ԻՇԽԱՆՅԱՆ
(ստորագրություն)

«20» փետրվարի
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-26/1-Խ-1

Հավելված N 2
2026թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	85311210/17	խորհրդատվության ծառայություններ	2,268,000	3,402,000	4,536,000	5,670,000	6,804,000	7,938,000	9,072,000	10,206,000	11,340,000	12,474,000	13,608,000	13,608,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Տիգրան Իշխանյան
Հասցե՝ Կոտայքի մարզ, գ.Առինջ, Խ. Աբովյան թաղ., 16-րդ փողոց, 4/2տուն
նույնականացման քարտի համարը 017627019, տրվ. 07.02.2025թ., 050-ի կողմից,
հանրային ծառայությունների համարանիշը 1810760208
Բանկը՝ Ակբա բանկ
Հ/Հ 220660480967000
Հեռ. 041413131
Էլ. հասցե՝ tishkhanyan@mail.ru

Տ. ԻՇԽԱՆՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 3
«20» փետրվարի 2026 թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«20» փետրվարի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն